




ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Ի պրակտիկա ճարտ. 10, Վեյստ. 5 ֆր: ԳԱՆԻՍԿ: Երաստանի ճարտ. 12, Վեյստ. 6 ֆր: Գրաթիվեր. եւ չին արտեր: Հասցե DIRAN PAPAZIAN YELDIZ TABIA, VARNA BULGARIE

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Խմբագրող թիւնս գոհութեամբ ըստուցած է համակրական երեք նամակներ (*) , որոնք գնահատելով մեր թերթին ուղղութիւնը, կը քաջալերեն բոլոր մեզ յարատեւ նոյն ճամբան, առանց ահանջ տալու մէկ քանիներու բարբառնալանքին, որոնք չը գիտես ի՞նչ տեսակ փոքիլ ցուերով կը պահանջեն մեզմէ հրաժարիլ նոյն իսկ առանց անձնականութեան գալչելու. — ինչ որ է մեր թերթին ալ ուղղութիւնը — անհատականութեան ընկերային մոլութիւնները ձաղկելէ իբրեւ թէ անհատները չը կազմէին ընտանիքը և ընտանիքներն ալ չը կազմէին ազգը և անհատական մոլութիւններ տակաւ ծառայ գտնելով, հեռզհետէ չ'ազգէին հանրութեան բարձրակներն վրայ ալ:

Մենք շնորհակալ ենք այս գնահատողին:

(*) Տիարը նամակագիրներէ ներողութիւն կը խնդրենք իրենց նամակները չը հրատարակելուս համար, անոնց փողոթնական և գովիտի խնդրերուն պատճառաւ: Մեր պարտքն է որ կը կատարենք:

ուր համակրութենէն և ահաւորիկ անգամ մըն ալ կը յայտարարենք թէ, մեր թերթը մազի չափ չը պիտի չեղի իր բնութեան, որչափ ալ մէկ քանի խելակորոյններ յանդգնին մինչև իսկ սպառնալիքի սնամէջ երկիւղներով իրենց կռնակը աղատելու նկրտիլ Հայրիկ խորագրանէն: Ասոնք ճանձի բոլորչանքներ են և պիտի մնան վզաոցներ, միմիայն օգին մէջ պնդուելու սահմանաւ:

ԱԶԳԱՅԻՆ

Յունուար ամսոյ մէջ Ազգ. Հիւանդանոցին եղած նախարարութիւններուն գումարն է 16,214 զրշ:

— Անառակի կերակին Հալէպի եկեղեցիին մէջ վայրկեական հանգանուկութիւն մը կատարուելով 12 տկի գոյացեր է: Այդ գումարը յատկացուեր է Արաբկիրի որբանոցին:

— Էրզրումի առաջ տեղապահը տե-

զեկադրած է Պատրիարքարան թէ, քանի մը հայ գիւղերու մէջ երեցած գաւառափոխութեան առաջըը բոլորովին առնուած է և ժողովուրդը առաջուան պէս փարած է իր մայրենի եկեղեցիին:

— Հանրածանօթ բարերար Պ. Զանչեանց իր ծախքովը 1000 սրբանոց մը բանալու համար այս անգամ 2500 ռուբլի զրկած է Պատրիարքարան:

— Բերայի Աղքատախնամի դարմանոտան մէջ հիւանդներ դարմանելու կերպը սովորեցնելու համար դասընթացք մը սկսելու ձեռնարկութիւն եղած է:

— Հազարեան ձիւմարանին մէջ գրանուած 1000 տարուան գրչադիր աւետարանին լուսաորայ տպագրութիւնը (300 օրինակ) աւարտել է: Այդ Աւետարանը որ Բրիտտոսի 887 թուականին գրը չադրուած է, միշտ հետաքրքրութեան առարկայ դարձած է եղեր ամէն ազգէ հնադէտներու համար: Հայ և Անգլիացի բողոքական քարոզիչներ իրենց ընթանչանքը յայտնելով գոյժին զեղեցկութեանը վրայ, խոստովանել են թէ Հայերը 1000 տարի առաջ գրչադրով այնքան տարածած են Աւետարանը, որքան այսօր կը տարածուի տպագրութեամբ:

— Մարտ 5 կիրակի իրիկուն ժամը 6ին Թիֆլիսի մէջ երկրաշարժի ցնցում մը զգացուել է: Դանձակ դաւառի երեսնեքսֆ գիւղին մէջ երկրաշարժը աւելի զգալի եղել է: Եկեղեցիին դանդակները սկսել են իրենք իրենց հընչել: Յնցումը տեւել է 20 վայրկեան:

«Եկեղեցի»

— Մանչէսթրէն կը գրեն թէ Տ. Թոմս քահանայ Զուղայեցի, տիտղոսաւոր վարդապետ Աստուածաբանութեան, Ե.

կեղեցի անունով կրօնական հանգէսի մը հրատարակութեանը ձեռնարկած է:

Եկեղեցիի Ա. թիւը հրատարակուած է արդէն ութածալ տետրակի ձեւով, որ առայժմ ամիսը անգամ մը կը հրատարակուի և քիչ ատենէն չորսթաթերթի պիտի վերածուի:

Ջերմագէտ կը յանձնարուենք սոյն հանգէսը բանասիրաց ու շարժութեանը, մանաւանդ կարգ մը քահանաներուն, որոնց իբր ուղեցոյց կրնայ հանդիսանալ անսայթաք քաղեցնելու համար զանոնք իրենց ընտրած ասպարէզէն մէջ:

Խարբերդի տրկածը

Խարբերդ քաղաքի Սինապոթ թաղին մէջ անցեալ չորեքշաբթի գիշեր 10—12 խորանարդ մէթր ժայռ մը լերայի բարձունքէն վար գլորել է: Պէրվանեան Եղիայի, Գարաջուրեան Պետրոսի, Պարսամեան Թովմասի և Աւաքելեան Մատթէոսի տունները ժայռին տակ մնալով փլեր և տասը հոգի փլատակներուն տակ մնաւ են:

— Անցեալ կիրակի օրը Պոլսոյ Փաթիհ թաղը սփռւի մը դարձուել է: Բիցիցի Բուրջաճի Սեդրակ կերթայ իր մէկ առնելիքը գանձելու հասան և Մահմուտ անուն թուրքերէն: Այդ պատճառաւ կռիւ կը ծագի ու հասան դաշոյնը քաշելով կը միտէ Սեդրակին կուրծքը որ անմիջապէս կը մեռնի: Ոճրագործը ձերբակալուել է: Սեդրակ 35 տարեկան է եղել:

Նոր ձեռ Ռըսէնկոք մը

Պոլսոյ Թէրսանէի գերձակարանին տեսող Տիմիթրաքի անուն անձը նոր ձեռ ռըսէնկոթ մը շինած է որ առանց կարի է և միայն թեւերը կարուած են: Ատիկա Բարիդի արուեստահանդէսը պիտի զրկուի:

ՏԵՂԱԿԱՆ

Պոլիարիոյ այցելու հովիւ Գեր. Բար-
թողիմէոս Ծ Վարդապետ Պաղենան՝ հինգ-
շաբթի օրը քաղաքի մեկնեցաւ ի Ռուս-
ճուղ :



ԱԶԴ

Շարաթ, Ապրիլ մէկին երեկոյեան
ժամը 5ին տեղւոյ Պուլկար բողոքակա-
նաց ժողովարանը տաճկերէնի դաստիս-
սութիւն պիտի ըլլայ թէ, Հին ու Նոր կը-
տակարանը ու Ղուրանը ի՞նչպէս են գո-
յացեր :

Ը. ԲՄԻՐԻՍԵՆԵԱՆՑ

Պոլիարիոյ Նշանակութիւն

Յրանձնորքեր Չայրունի կ'իմանայ
թէ Ռուսիոյ Երմոտեան խորհրդական
Պ. Բուպէքոյի այս միջոցին Սօֆիա գըտ-
նուիլը՝ վերաբերութիւն ունի 80—100
միլիոն ֆրի փոխառութիւն մը կ'ընթելու
իսկիւն :

ԳԵՂԵՑԻԿ ԽՐԱՏԱԿԱՆ ՄԸ


Ըսեմ՝ բեղ, ո՛վ ընթերցող, թէ ինչու եր-
բեք հիւանդ չեմ ըլլար : Նախ սոփութիւն
ըրած եմ ամէն օր միևնոյն ժամուն ճաշել, կա-
րելի եղածին չափ քիչ ուտել, որոշեալ ժա-
մուն պառկիլ եւ ժամանակին ալ արթննալ :
Ապա ուրիշին գործին բնաւ չեմ խառնուիր
եւ միմիայն իմ գործերով կը պարտպիմ : Ա՛յ իմ
գաղտնիքս ուրիշին կը հայորդեմ եւ ո՛չ ալ
ուրիշին գաղտնիքն իմանալու հետամուտ կ'ըլ-
լամ : Ամենեւին մարդ չեմ բամբասեր, եւ
եթէ ուրիշները զիս բամբասեն, ամենեւին
փոյթ չեմ ընել, եթէ՝ սակայն պարտաւա-
նաց արժանի թերութիւն մը չունենամ, իսկ
եթէ այդպիսի թերութիւն մը ունենամ,
անոնց բամբասանքէն օգտուելով, թերու-
թիւններս ու պակասութիւններս ուղղել կը
ջանամ : Կարողութիւնս կը ճանչնամ, եւ աստի-
ճանիս ու կարողութեանս չափէն աւելի ծախք
չեմ ընել, իսկ պարտք բնաւ չեմ ընել. շատ
հարուստ ըլլալու համար երբեք միտքս չեմ

յոյնեցներ, եւ փոխանակ շատ ունենալով
քիչ գոհ ըլլալու եւ կամ բնաւ գոհ չըլլալու
տեղ, ինքզինքս վարժեցուցած եմ քիչով շատ
գոհ ըլլալու :

Ըյա կանոններուն հետեւելով, կենացս մէջ
երբեք անհանգիստ ըլլալու պատճառ մը չեմ
ունեցած եւ հիւանդ ալ եղած չեմ :

Միտքս միշտ առ Ըստուած պահելու համար
երկու միջոց ընտրած եմ առաջին միջոցն է
միտքս միշտ դուրսի պահել եւ բնաւ բար-
կույթեմ, առեւելեմ, ցանկութեմ եւ
կամ ո՛րեւ լցէ կիրքով խոփել զայն, որովհե-
տեւ Ըստուած պարզ եւ մաքուր միտքը կը
սիրէ : Երկրորդն է, կարելի եղածին չափ զգու-
շանալ այն բանն ընելէ, որուն վրայ թերեւս
վերջը զոյժամ, կամ երկբայիմ որ աղէկ ըրի
թէ գէշ : Կարծեմ թէ այսչափ բաւական է
լաւ մարդ մ'ըլլալու, որովհետեւ բարի եւ ճշ-
մարիտ բաները ինքնին լոյսաւոր եւ բացատրոյ
են եւ անոնք ընել կը վայելէ, միջոցեւ ան-
ստոյգ ու ապականեալ կամաց եւ զուարճու-
թեանց կապուած ու կասկածելի ըլլալով ոյժաբ
չէ անոնք ընել եւ անոնցմէ զոյժանալու է :
միով բանիւ, խառնեմ փախչելով, բուսոյ
միայն հետեւելու է :

ԽՈՇԸ.ԿԸՆ



ԾԻԾԱՂ

Ստահակի մը գրպանը ժամացոյց
մը կար. իր ծանօթներէն մէկը կը հար-
ցնէ թէ. — Ի՞նչպէս կրցաք տէր ըլլալ
այդ ժամացոյցին :

Ստահակը (Լրջօրէն) — Վեց ամիս բան-
տարկութեամբ :


Բարեկամ, խնդրեմ, ինծի հինգ ֆր.
փոխ տուէք, վաղը կը վճարեմ :

— Լաւ, բայց վստահ չեմ վճարել-
նուղ :

— Ուրեմն ապահով ըլլալու համար
փորձեցէք. հիմա ինծի տասը ֆր. տը-
ւէք ու պիտի տեսնէք որ անխիչապէս 5
ֆրանքը ձեզի պիտի վերադարձնեմ :

ԳՈՂԵՐՆ ՈՒ ՔՍԱԿԱՅԱՏՆԵՐԸ

ԱՐՈՒԵՈՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՇՈՒՐՁԸ



Բարիկ 21 Մարտ 1900

Բարիկ Սարգստահանդէսին բացումը մօտ ըլլալով, գոյերու կատարեալ բանակ մը սկսած է արշաւել դէպի Փրանսայի մայրաքաղաքը՝ որ առաջիկայ հա՛ դէս ներսն առթիւ շահադարձման սքանչելի աղբւր մը պիտի գտնուի այդ վերջին ծայր պատուաւ որ արհեստագործներուն : Կ'ընեն նոյն իսկ թէ նիւ-Շո-րի մէջ քաղահատնեքու տնտեսն Ընկերութիւն մը կազմուեր է մի միայն Բարիկը շահագործելու նպատակով :

Աւելորդ է ըսել թէ Բարիկի ստիկանութիւնն ալ իր կողմէ սքանչելի հսկողութիւն մը կը կազմակերպէ այս պահուստի մէջ ոչ բոլորովին, գէթ մասամբ առաջը առնելու համար այդ համակերպի մարդոց շահատակութեանց մարդ իկներ՝ որոնք քիչ մը չափազանց խօսեցնել պիտի տան իրենց վրայ :

Այս առթիւ, տեղւոյս առօրեայ թերթերէն մէկը, հետեւեալ կերպով կը նկարագրէ այն առաւել կամ նուազ վարպետութի միջոցները որոնցմով քաղահատները ի գործ կը դնեն իրենց հանրօգուտ արհեստը :

Այդ միջոցներուն ամէնէն տա օրինակներէն մէկն է՝ à lesbrouffe կոչուածը : Մարդ մը կը վազէ բոլոր ուժովը և բուռն կերպով կը բազխի մարդու մը՝ որ առաջուց իսկ նշանակուած է և որուն վրայ երկրորդ քաղահատ մը կը հսկէ : Ապրիլը գետին կը տապալէ մարդը ու կանցնի կ'երթնայ առանց կենալու : Այդ միջոցին երկրորդ քաղահատը խեղճ մարդուն մօտենալով, «վախ, վախ» ըսելով կը սկսի վեր վերցնել, առանց մօտեցալու այդ պատահութեամբ շորթել խեղճին դրամապանակը զոր երրորդ մեղսակցի մը կուտայ : Այդ երրորդը դրամը կ'առնէ ու չի կենար : Ինչ ետքը, խեղճ մարդը ինքզինքին գալով թէեւ կը հասկնայ գլխաւորապանակին գողցուած ըլլալը, բայց ինչ կրնայ ընել : Ան ոչ ոք կը կասկածի

այն բարեախառ մարդուն վրայ՝ որ արկածեալը վեր վերցուցած է : Եւ մէն տեսակ խնամքի առարկայ ընելով զայն մնաց որ դրամապանակն ալ իր քովը չի գլուխուրդու նոյն իսկ ստիկանական խաղաղութեան մը պահուն կրնայ ամուր սրտով գտնուած տեղը մնալ, քանի որ մարդուն դրամապանակը շատոնցարդէն տարուած է երրորդ մեղսակցին կողմէ :

Աւելի տեսիլ տարածուած դրողութեան եղանակ մըն է գինովյալնելով կատարուած շորթումը : Մարդ մը՝ որ լինուած ճանչնար, բարեկամ կ'ըլլայ քեզի հետ և օրին մէկը գաւաթ մը օգի կ'առաջարկէ, գրեթե մըն մը կ'երթնար, և քեզի առատածնուն բարեկամը շէնք չընար : Երբ կը գինովյալնէ ձեզու դրամիդ կը շորդէ : Այս գողութիւնը ընդհանրապէս պանդակներու մէջ կը կատարուի նոյն իսկ յաճախ կրնայ մասնակցութեամբ :

Կայ նաև ամերիկեան դրողութիւնը որ գրեթէ միշտ կը յաջուի : Պանդակի մը մէջ, մարդուն մէկը իր դրացիին կապոյ մը տանելով կ'ըսէ :

— Ստիկանաւ եմ քանի մը ժամ բացակայել պանդակէն : Կը վախնամ որ գող մօտն : Եւ ասոր համար կը խնդրեմ որ քիչ մը առնուան համար այս կապոյը ձեր քով մնայ : Միայն թէ աչազրուութիւն, որովհետեւ 35000 Փրանք կայիւնը :

Ան գողը կը բանայ կապոյին բերանը և իր դրացիին ցոյց կուտայ քանի մը ծրարներ՝ որոնց վրայ 1000 թուանշանը գրուած է, և որոնցմէ մէկէն գուրալ պանքօթի մը ծայրը կ'երկարի : Տալը վայրկեան ետք, գողը պանդակ կը վերադառնայ աճապարանքով և իր դրացին գտնելով կ'ըսէ :

— Սիրելի բարեկամ, աճապարանքով դրամապանակս սեղեակս մուցայ : 500 Փրանք փոխ տուէք ինձի :

Բնականաբար «սիրելի բարեկամ» կը յանձնէ 500 Փրանքը, մտածելով որ մարդուն 35,000 Փրանք իր քովը առնող ձգուած է : Եւ սակայն կ'անցնին բաւական օրեր, ու դրացին չի գար, ոչ 500 Փրանքը հատուցանելու, ոչ ալ 35, հազար Փրանքը առնելու : Ան տան միայն մարդը կը մտածէ կապոյը բա-

նալ, ու ծրարները հատիկ հատիկ քակելով հին լրագիրներ միայն կը դռնէ անոնց մէջ, ինչպէս նաեւ 50 ֆրանքնոց պանքնօթ մը՝ որ, դիտմամբ կիսովին դուրս ձգուած էր: Աւելորդ է ըսել թէ այդ պանքնօթն ալ գրեթէ միշտ կեղծ կ'ըլլայ:

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

Տ Ն Ա Շ Է Ն Ը

Մինչդեռ կարգ մը տիկիները զեղխութեամբ անխնայ ծախքեր ընելով իրենց այրերուն անտանելի բեռ մը կրլլան ու տանը անդորրութիւնը կը խանգարեն, բարեբաղդաբար կը գտնուին նաեւ այնպիսի տանտիկիներ, որոնք իրենց իմաստուն խնայողութիւններովը կ'օժանդակեն ամուսիններուն:

Այս կարգի տիկնանց ձեռքին մէջ քիչը կարծես հրաշքով կը շատնայ, կը բազմանայ և տանը մէջ ի չգոյէ առատութիւն մը կը ծաւալի. ու մարդ երանի կուտայ այն տնեցւոյ, որ այս տեսակ տանտիկին մը ունին: Շատ անգամ եթէ ամուսինը չուզէ առնել տանը համար կարեւոր եղած մէկ պիտոյքը, նոյն տանտիկինը՝ փոխանակ շատերուն պէս կը, ուր հանելու, վարպետութիւնով մը ճարը կը գտնէ ու այն անհրաժեշտ պէտքեր կը հոգայ:

Ահաասիկ օրինակ մը:

Տիկին Հրաքիւր քանի մը անգամներ ամուսինէն խնդրեր էր որ ընտանեաց ճերմակեղէնները, որոնք բաւական հինցած էին, նորելու համար ծրար մը պատիտա առնէ: Ամուսինը միշտ «գլխուս վրայ, առնեմ» կըսեր ու չէր առներ, կաշեւորութիւն չը տալով յիշեալ պէտքին:

Իրիկուն մը դարձեալ նոյն պատիտային խօսքը բացուեցաւ այդ եւ կնոջ մէջ:

— Գուրում ելիկում աղա, սա թօր մը պատիտան չառնելու համար երգումը բաժնի:

— Ինչո՞ւ երգումը բաժնի ըլլամ, կնիկ,

այսօր աւելորդ 10—20 ֆրանք ձեռքս որ անցնի, անմիջապէս կ'առնեմ:

— Աւելորդ ֆրանքը ինչ ըսել է հոգիս, բան մը որ անհրաժեշտ պէտք է, խնայողութիւնով ու նեղուելով առնելու է. հատ մը հաշուելու շապիկդ չը մընայ, բոլորն ալ հինցած, բլիկ բլիկ եղած են, կարկտան չեն բռներ:

— Էյ ինչ ընենք, վաստակնիս հաղիւ կոգտէ օրուան ծախքերնուս:

— Մարդս եթէ կամք ունենալու ըլլայ, աստեղ անհրաժեշտ պէտքի մը համար 50—60 զրուշը կը ճարէ:

— Մէկը գիտեա մէկը չիտես, կնիկ:

— Ատանկ ըսելուդ, մէկը կայ մէկը չը կայ ըսելով ժամանակնիս անցունենք ըսէ որ աւելի ճիշդը եղած ըլլայ, կեցիր դուն, անշուշտ օր մը ձեռքս ստակ կ'անցնի, առանց քեզի հարցնելու, պատիտան պիտի առնեմ:

— Բա՛ւ ձեռքդ ո՞րիկէ ստակ պիտի անցնի:

— Ո՞վ գիտէ, ուրիշ մէկ երկու անգամներու պէս՝ դիպուածը անշուշտ դարձեալ ինձի պիտի օգնէ:

— Աստուած տայ դիպուածը քեզի օգնէ տէ, սա պատիտա առնելու փորձանքէն զիս ազատես:

Այս խօսակցութենէն գրեթէ շաբաթ մը վերջը, իրիկուն մը, ելիկում աղան կըսէ իր կնոջը:

— Հրաքիւր, վաղը իրիկուն Լեւոնը վարժարանէ վերադարձին դերձակ Մոնոնիկ աղայենց զրկէ որ շինած կոշիկներնուս փոխարժէք 16 ֆրանքը ուղէ. ամիս մըն է դուրսը չեմ տեսնար կոր զինքը, որովհետեւ խանութը ձգեւ տանը մէջ կ'աշխատի եղեր:

— Շատ աղէկ, կը զրկեմ:

Յաջորդ իրիկուն Լեւոնը կերթալ վերայիշեալ գումարը կը պահանջէ Մոնոնիկ աղայէն, որ կը խօստանայ շաբաթ իրիկուն վճարել Լեւոն շաբաթ իրիկուն տասնըկէ ֆրանքը կը բերէ մօրը կը յանձնէ:

— Հիմա, կըսէ ինքնիրենը տիկին Հրաքիւր, ահաասիկ յարմար առիթ մը պատիտան առնելու. բայց եթէ ամուսինս անհրաժեշտ պէտք ունի այս դրամին... է՛հ, այդ ալ կերպով մը կ'ընամ:

հասկնալ այս գիշեր ու վաղը պատի-
տան կառնեմ. թող ան երթայ գիպ-
ուածի չը հաւատալը ոտիքի:

Նոյն իրիկուն տիկին Հրաբիր գիտ-
նալ ուղածը հասկցած էր վարպետու-
թեամբ, տմուտինը ու է նեղութեան
մէջ չէր գտնուէր, ուստի 16 փրանքին
խօսքը չը բացաւ: Հետեւեալ օրը պա-
թիստան առնուեցաւ: Իրիկունը ելիկում
աղան տուն վերադարձին տեսաւ որ կի-
նը ծրար մը պաթիստա առջին առած
չապիկէ ալ ճերմկեղէն ձեւերու զբաղած է

— Հրաբիր, ադ խտտան ուրի՞նչ առիր:

— Դիպուածը բերաւ:

— Կատակը մեկդի, ուրի՞նչ առիր:

— Տալածոյի վաճառատուն, մը, 15
փր. տուի, սո՛ւղ առեր եմ.

— Ստակը ո՛ւրի՞նչ գտար:

— Մոնոնիկ աղայէն 16 փրանք չէ-
ր՞նք ուղեր:

— Էյ, ծախսեցիր այդ ստակը

— Ամենը չէ՛ հոգիս, 15 փրանքը պա-
թիստային տուի, աս ալ աւելցածն է,
ըսաւ անոռ ժպիտով մը, ու 1 փրանքը
ամուսնոյն յանձնեց:

Ելիկում աղան մէյ մը փրանքին կը
նայէր մէյ մըն ալ կնոջը:

— Հրաբիր, հիմա աս եղաւ.

— Ձե՛ս տեսնար կոր, խուշո, կը ձե-
ւեմ կոր:

— Հապա նպարաւաճառին խօսք տը-
ւեր էի որ ամբողջ հաշիւը մաքրեմ. հի-
մա մարդուն ի՞նչ ըսեմ.

— Աստուծով քանի մը օրէն կ'աւտանք
ըսէ:

— Քանի մը օրէն ո՛ւրի՞նչ պիտի տանք:

— Ադ ի՞նչ յուսահատի խօսք է, ելի-
կում աղա. ամենեւին քեզմէ չէի յու-
սար, 15 փրանքը քեզի պէս կամքի տէր
մարդու մը համար չի վճարուելի՞ք բան
սըն է:

— Աղէկ կըսես ամա կնիկ, չըլլար ալ
նէ կըլլար հիմա ադ ճերմակեղէնները:

— Էհ, հոգ չէ, ալ եղաւ լմնցաւ: Պէտք
է գիտնանք թէ, մամիկիս ըսածին պէտ,

Ադամ նախահայրին ժամանակը չենք
որ ողա ա յրասեաքաղիով ծածկուինք.
չքեզ պատառատուն չապիկով տեսնողը՝
զիս կը մեղադրէ, հոգիս:

— Աս խաղը ինձի խաղացիր, հէ՛...:

— Խաղ չէ սիրելի ամուսինս, այլ ան-
հրաժեշտ պէտք էր. նպարաւաճառին
պարտքը կը վճարուի, օր մը առաջ
կամ ետքը, որովհետեւ անկա մարդ է,
ստակը կ'ուզէ. ի՞նչ պաթիստան լեզու
բերան չունի, չը կ'նար ըսել թէ պէտք
եմ, ինձի առէք: Հիմա, քանի որ առի-
թը ներկայացաւ, Վրնայի՞ անհրաժեշտ
պէտք եղած պաթիստան չառնել:


Ելիկում աղան քանի մը վայրկեան
մտածելէն ետքը ըսաւ. — Հրաբիր, ի-
րաւունք ունիս, շատ աղէկ ըրիր. թէօր
ինձի մնար, ս'վ գիտէ տակաւին որչափ
ժամանակ այդ պաթիստան չը պիտի առ-
նուէր ու տանը մէջէն ալ ասոր խօսքը
չպիտի պակսէր:

— Ու մանաւանդ, հինցած ճերմակե-
ղէնդ ալ չպիտի նորոգուէր:

Ձեզխութեան վարժուած կարգ մը
տիկնանց ականջին, մեր այս պատմածը,
ինչպէս կըսեն ուսմիտէն, «ձուրի ծան
կուղայ»:

ՁԱԹԵԼԻ

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ



Առաջին անխալ կարգայողին նուէրն
է կատակերգութիւն մը:

ԺԱՂԱԿՐԱՏԸ

ԶՈՒՆԻՃԱԼԻ ՊԱՏՄՈՒՆԾՔ

(Հար. անցեալ թիւէն և վերջ)

Իսկ հայր Լաբալիւ յանձին իր կնոջ, կ'անիծէր Քիւնիի և ուրիշ տեղերու շատախօս կիները: Ժամը չորսին, ընդհ. գատախօսը հարա-
ցաքննիչ գատաւորին ու բարաւորարի մը հետ Քիւնի մտաւ: Հայր Լաբալիւն բանտէն հա-
նեցին և ասաջնորդեցին գատաւորներուն աս-
ջիւ: Դիւրով այդ կործը մինչև այն ատեն
շատ հանդարտ երեցած էր, կարծես թէ ա-
մենամեծ յանցանքը մը անգամ չէր ծան-
րանալ խղճին վրայ. բայց երբ հարցաքննիչին
ասջև գտաւ ինքզինքը, խռովեցաւ:

Հարցաքննիչը. — Լաբալիւ, մարդասպա-
նութիւն մը գործեր էք:

Լաբալիւ աչուրները խոշոր խոշոր բացաւ,
իբր թէ բան մը հասկցած չլլար:

— Մարդասպանութիւն մը գործեր էք, կրկ-
նեց ծանր կիրպով գատաւորը, մարդ մը ըս-
պաններ էք: Պատասխանեցէ՛ք:

— Պարոն գատաւոր, փերեղակ մը (Ման-
նիէն^(*) մը) սպաննեցի:

— Ուրիմ կը խոստովանիք:

— Կը խոստովանիմ, պարոն գատաւոր:

— Այդ փերեղակը ձեզի ի՞նչ ըրաւ:

— Ճամբաս դոցել կ'ուզէր:

Գատաւորները դժուարաւ կրցան իրենց
խնդուքը զսպել. այնչափ տարօրինակ դէմք մը
ունէր Լաբալիւ՝ այդ խօսքը ըսած պահուն:

— Ի՞նչպէս այդ մարդը սպաննեցիք:

— Փերեղակը (մանիէն) արգելք ըլլաւ
կ'ուզէր. բրիչս ձեռքս էր. վեր վերցուցի և
սոսկալի հարուած մը տուի գլխուն:

Ներկաներուն վրայ սոսկումի սարսուռ մը
պտուտքեցաւ:

Լաբալիւ շարունակեց. — Ամէն մարդ գի-
տէ որ ես չար մարդ մը չեմ, և երգում կը-
նեմ որ ասաջին անգամն է որ ասանկ բան մը
կը պատահի:

Այս անգամ ոչ որ կրցաւ խնդուքը զսպել:

— Ոճրին վայրը պէտք է երթալ, ըսաւ
ընդհ. գատախօսը, որպէս զի զ'հը հաններ
հոգէն:

(*) Պէտք է ուշադրութիւն ընել այս ման-
նիէն բառին՝ որ մեծ գեր պիտի խաղայ
պատմութեան ընթացքին մէջ:

Երիւս ոստիկաններ իրենց մէջակցը տան
Լաբալիւն, և ամէն մարդ դուրս ելաւ Քաղա-
քատունէն: Զուլուած ամբողջ անոնց միա-
ցաւ մինչև այդին:

— Հո՞ս է որ թաղեցիք փերեղակը (ման-
նիէն), հարցուցին հայր Լաբալիւի:

— Այո՛:

— Հիմա ցուցուցէք ձիշդ այն տեղը՝ ուր
թաղեցիք զայն:

Ծերուկը բանի մը քայլ արնելէ ետքը կե-
ցաւ բակով. — Հոս է:

Սարսուռ մը պտտեցաւ ամբողջին մէջ՝ որ
այդին լեցուած էր, անհամբեր տեսնելու այն
սոսկալի տեսարանը որ պիտի պարզուէր իրենց
աչքերուն առջև: Բրիչով մարդ մը առաջ ան-
ցաւ և սկսաւ գետինը փորել: Հինգ վայր-
կեան ետքը բաւական խոշոր ծակ մը բացուած
էր թէև, բայց բան մը չէր երևար:

— Լաբալիւ, ըսաւ ընդհ. գատախօսը խոս-
տօրէն, հոս չէ որ թաղեր ես բու զոհդ:

— Ներսիսութիւն, ձիշդ հոտ է:

— Բայց ո՞ւր է, բան մը չերևար:

— Անգամ մըն ալ ներսիսութիւն կը խընդ-
րեմ պարոն գատաւոր, ձեր փետուածը շա-
տանց ատկէ դուրս հանուած է:

— Խենդ է այս մարդը, աղաղակեց ընդ-
հանուր գատախօսը:

Հայր Լաբալիւ հանդարտօրէն գետին ծը-
նելով վերցուց ահագին խնունջ մը (սայլան-
կէօղ) որ մեռած էր՝ պատեանին վրայ զօրա-
ւոր հարուած մը ընդունած ըլլալուն:

Յետոյ ըսաւ գատաւորներուն. — Լաւ կը
տեսնէք որ չէի ստեր՝ երբ կըսէի թէ թաղե-
ցի զայն. տեսէ՛ք, դեռ քիչ մը առաջ դուրս
հանուած է փոսէն:

— Լաբալիւ, կը համարձակի՞ս արգարու-
թեան հետ կատակելու:

— Պարոն ընդհանուր գատախօս, ես իմ
բովանդակ կեանքիս մէջ պատուաւոր մարդ մըն
եմ եղած ու միշտ յարգած եմ օրէնքը:

— Բայց վերջապէս ո՞ւր պահեցիք ձեր ըս-
պանած մարդը:

— Ե՛ս մարդ սպաննեմ: Օ՛հ, պարոններ,
ինչպէ՞ս կրնաք ատանկ բանի մը վրայ մը-
տածել: Ես մի միայն խնունջ մը (մանիէն)
սպաննեցի. և ահաւասիկ սպաննածս:

Ներկայ ամբողջ ահագին խնդուք մը փրցուց:

— Պարոններ, ըսաւ ան ատեն գիւղապե-
տը, Քիւնիի մէջ մաննիէն բառը թէ «փե-
րեղակ կը նշանակէ և թէ «խիտունջ»:

խնդուքները կրկնապատկուեցան : Բայց գա-
տաւորներն ու ոստիկանները գոհ չէին :

— Լարալիւ , ըստ խտորէն ընդհանուր
դատաւարը , անբացատրելի նպատակով մը
դուն տարածանցիր այս անտեղի ոճրագոր-
ծութեան լուրը :

— Օ՛հ , ես ճշմարտութիւնը միայն ըսի ի-
րենց , յայտարարելով թէ մանեխեն մը ըս-
պանած եմ , այսինքն խտուշ մը , իրենք փե-
րեղակ կարծեր են :

— Ասեք անմէջ առարկութիւններ են .
արդարութեան հետ կատակի ելած ըլլալնուդ
պաշտօնաւ պատժական տեսանի տալէ պի-
տի դատուիս :

Այս խտրերը բերուն պէս , հայր Լարալիւ
լալ սկսաւ բնելով :

— Ի՞նչ , ես պատժական տեսանի մշտու-
ցիւ ելլեմ գողի մը կամ շար մարդու մը
պէս , ես , հայր Լարալիւ , ամենէն սիրուած
Քրիստի մէջ : Ա՛հ , պարոններ , կը զգամ որ
սխալ մը ըրի , բայց կը զղջամ ու ներողութիւն
կը խնդրեմ : Պարոններ , բնաւ չէի կարծեր որ
խնդիրը այս առաջնաւ ազնուկ պիտի հանէ և
այսչափ հեռուները պիտի երթայ :

— Հայր Լարալիւ , ըստ նիւզակաւար ,
միշտ պատուաւոր մարդ մը ծանցուած էր հոս ,
անշուշտ պատժաւ մը ունէիք այդ բանը ընե-
լու համար :

— Պարոններ , քանի որ կ'ուզէք , ամեն բան
պիտի յայտնեմ ձեզի : Այն մը ունիմ , զոր
շատ կը սիրեմ , որովհետեւ երեսներ հինգ
տարիէ ի վեր հետը կ'ապրիմ , բով բովի ձե-
րացած ենք : Գժբազմաբար սոսկալի պակա-
սութիւն մը ունի , շատախօս է , և ես , իր շա-
տախօսութիւնը խնդրելու համար ամէն բան
ըրած եմ , առանց սակայն յաջողելու : Արեւ
նոր փորձ մը ընել ուզեցի , ու այդիւն վերա-
դարձիս իրեն ըսի որ մանեխեն մը մտնցնե-
լով թաղած եմ այդիս մէջ : Արդ , պարոն-
ներ , անպիտանը չէ կրցեր լեզուն բռնել ու
խնդիրը պատմեր է դրացուհիի մը , ան ալ
ուրիշի մը , և այսպէս յաջորդաբար , մինչեւ
որ եղելութիւնը խնայուելով ոստիկաններ և
կամ էին իմ առնալ թողոցի որ զիս տանին ,
որովհետեւ կը յուսայի որ տակա պիտի կր-
նար դաս մը ըլլալ իրեն համար : Ահա տակ
ճշմարտութիւնը , պարոններ , ա՛հ , երանի թէ
կեանք շատախօսութիւնը վերջ գտնէր առով :

Գառաւորները իրենք ալ չկրցան խնդու-
րին բռնել և ահագին դահլաճ մը ձգեցին :

Աւելորդ է ըսել թէ ալ անկէ ետքը , տի-
կին Լարալիւ բնաւ շատախօսութիւն չըրաւ :

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՐ

ՎԵՐՋ

Մ. 2

ՀՈՎԱՍՏՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հա-
տարիկ մըն է , ընթերցանութեան ար-
ժանի : Գինն է 25 ֆանդիմ , շատ առնող-
ներու համար շախաւոր զեղչ : Գիմել
Զարդհանէլեան դրատուն վառնա :



Հայկական արձարան ճաշարան ,
ընթերցարան , պիւրատօ , կղզակ եւ
ընտիր սիկարներ : Հաստատութիւնս
բաց է ամեն օր առաւօտեան ժամը
5էն մինչեւ 2 : Երբորդ Աֆիւթիւ թիւ 388 ,
28րդ դրօշին մօտիկ ի նիւ — Եօրբ :

ՆՈՐ

Ա. Զ. Մ. Ա. Տ. Ո. Ի. Ն.

Կ. Ա. Զ. Ն. Ա. Ռ. Բ. Ա. Ն. Ի.



Սողալը չէլմէ , աղջկանց կիմ-
նաղիէի դէմը , վարնա :

Ռսիկզո՞ծ , կտշեկաղմ , լաթակաղմ և
թղթակաղմ եւրոպական ճաշալաւ :
Իւրաւատաշէլի գինն է : Կը պատրաստէ
նաե վաճառականական տոմարներ եւ
գողարցական տետրակներ :

Отговорникъ М. Сконовъ
ВПасчрнаница „Взтаймоэнь“ —